# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 045

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ-ԴԻԼԻՋԱՆ ՄԱՅՐՈՒՂՈՒՆ ԿԻՑ ՀԵՆԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՕԲՅԵԿՏՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, ՀՀ կառավարության 2015թ-ի մարտի 19-իթիվ 596-Ն որոշման 7-րդ գլխի 147-րդ կետով՝

ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի Վանաձոր-Դիլիջան մայրուղուն կից հենապատի կառուցման շինարարական աշխատանքների ավարտական ակտի ընդունման համար ստեղծել ավարտված օբյեկտն ընդունող հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Տատյանա Նովիկովա Ա. - համայնքի ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարող:

Անդամներ՝

Կարեն Սարդարյան – Ֆիոլետովո համայնքի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ:

Արման Մեծոյան- գլխավոր կապալառու, «ԱՐՄԱՆ ՄԵԾՈՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» Ա/Ձ-ի տնօրեն:

Հրանտ Կարապետյան-հեղինակային հսկողություն իրականացնող «ԱՔԱՐԱ» ՍՊԸ-ի տնօրեն:

Վռամ Բեկզադյան- տեխնիկական հսկողություն իրականացնող «ՎՌԱՄ ԲԵԿԶԱԴՅԱՆ ՄԻՆԱՍԻ» Ա/Ձ-ի տնօրեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԿԱՏԱՐՈՂ Տ. ՆՈՎԻԿՈՎԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 046

### ՀՐԱՏԱՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի հոդված 23-ի 1-ին մասի 2-րդ կետով ևՀ Հ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ մասի 1-ին կետի դ ենթակետով և 71-րդ մասի 1-ին կետի ա ենթակետով սահմանված դրույթներով, որոշում եմ.

Ֆիոլետովո համայնքի սպանդանոցի տարածքի հարթեցման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել հրատապության հիմքով մեկ անձից գնման ձևով: Գնման ընթացակարգի հրավերը տրամադրել միայն գնման հայտում նշված անձանց (հնարավոր մասնակիցներին): Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԿԱՏԱՐՈՂ Տ. ՆՈՎԻԿՈՎԱ

20 __ թ. ______________ ____
գ.Ֆիոլետովո

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 047

ՓՈՂՈՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ ,12-րդ կետերով, Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով.

1. Հայաստանի Հանրապետության ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում գտնվող բնակավայրի փողոցին  տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Ֆիոլետովո համայնք 3-րդ:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԿԱՏԱՐՈՂ** **Տ. ՆՈՎԻԿՈՎԱ**

20 __ թ. ________________ ____
գ.Ֆիոլետովո